## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

3 մայիսի 2019 թվականի թիվ 47-Ա
ք. Երևան

### «ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի ապրիլի 29-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Բավարարել «ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստածրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2019թ. մայիսի 3
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2019 թվականի մայիսի 3-ի թիվ 47-Ա որոշման

| Հեռուստածրագրի անվանումը | Թույլտվության ժամկետի ավարտը |
|---|---|
| «Discovery Channel»<br>«Animal Planet»<br>«Discovery Science»<br>«Eurosport»<br>«РТР-Планета»<br>«Россия 24» | 31.12.2019թ. |
| «НТВ Мир»<br>«Охотник и рыболов HD»<br>«Приключения HD» | 31.12.2019թ. |